

Արտաքին հարաբերություններ

2017 թվականի ընթացքում մարզպետ Հարություն Սարգսյանը ՀՀ-ում հավատարմագրված դեսպանների հրավերով մասնակցել է դեսպանատներում իրականացված միջոցառումներին:

Հաշվետու տարվա ՀՀ Վայոց ձորի պատվիրակությունը պաշտոնական այցով մարտի 24-ից 28-ը գտնվել է Ֆրանսիայի Հանրապետության Բանդոլ քաղաքում: Պատվիրակության կազմում ընդգրկված են եղել ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական Վասիլ Ասլանյանը և ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի ղեկավար Բաֆֆի Խաչատրյանը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հ. Սարգսյանն ընդունել է ֆրանսահայ բարերար Օհան Հեքիմյանին, <<Որդեգրի մի գյուղ>> և <<Ծագումը: Բացահայտում>> նախագծերի հեղինակ, Ավստրալիայի քաղաքացի, հայ ազգի բարեկամ Լեն Ուիքսին: Հուլիսի 11-15-ը <<Էկորիս Նիդերլանդ Բի ՎԻ>> ընկերության կողմից կազմակերպված ճանաչողական այցի շրջանակում ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը ՀՀ ՏԿԶ նախարար Դավիթ Լոքյանի գլխավորած պատվիրակության կազմում եղել է Նիդերլանդներում, որտեղ մասնակցել է Նիդերլանդների տարածքային զարգացման քաղաքականության պլանավորման, տարածաշրջանային մակարդակում նորարարության (էներգախնայողություն, ինելացի զարգացում), տեղական կառավարման համակարգի վերաբերյալ թեմաների շուրջ քննարկումներին: Հայաստանյան պատվիրակությունը նաև եղել է Ռոտտերդամ, Հաագա, Ուտրեխտ, Վազենինգեն քաղաքներում և տեղում ծանոթացել նիդերլանդական կառավարման նորարարական պրակտիկային: Նոյեմբեր ամսին մարզում հյուրընկալվել է Հայ-ռուսական միջտարածաշրջանային 6-րդ համաժողովի շրջանակներում ՀՀ-ում գտնվող Վայոց ձորի մարզի համագործակից ՌԴ Արխանգելսկի մարզի պատվիրակությունը, Արխանգելսկի մարզի նահանգապետի տեղակալ Ալեքսեյ Անդրոնովի գլխավորությամբ: